




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«8» ապրիլի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-27/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Վենկոն» ՍՊԸ-ի 21.03.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Վենկոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Վենկոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 21.03.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շրջանակային համաձայնագրով «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-1/3» ծածկագրի շրջանակներում սույն թվականի փետրվարի 26-ին «Վենկոն» ՍՊԸ-ն մասնակցել է էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների գնման ընթացակարգին:

Ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը հայտարարված հրավերի 24-րդ և 51-րդ չափաբաժինների (ընդհանուր գումարը 18 մլն դրամ ներառյալ ԱԱՀ) մասով ճանաչվել է ամենացածր գնային առաջարկ ներկայացրած ընկերություն և գնահատող հանձնաժողովի առ 11 մարտի 2016թ. գրությանն ի պատասխան՝ հրավերով սահմանված ժամկետում և կարգով a.amiryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացրել (ուղարկել) է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և լրացուցիչ հիմնավորումները:

Սույն թվականի մարտի 19-ին գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը՝ ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացության հիման վրա, համաձայն որի «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից: Սակայն ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Վենկոն» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների, մասնավորապես 2015թ. համախառն եկամտի հանրագումարը կազմել է 63,158,500 առանց ԱԱՀ, ինչը հաստատվում է կցված հաշվետվություններով:

Ընկերությունը, բողոքում մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին կետը, նշել է, որ մեջբերված հոդվածը երաշխավորում է գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը, այդ թվում խտրականության դրսևորմանը: Տվյալ կոնկրետ դեպքում գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, դրսևորել է խտրական վերաբերմունք Ընկերության նկատմամբ: Ավելին, գնահատող հանձնաժողովը գնման գործընթացում չի ապահովել իր հայեցողական իրավունքի միատեսակ կիրառությունը, դրանով իսկ հաստատելով իր կողմից խտրական վերաբերմունքի առերևույթ դրսևորումը՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-1/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

19.03.2016թ. կայացրած որոշումը՝ «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ, դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2016թ-ի կայացրած որոշումը՝ «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

«Վենկոն» ՍՊԸ-ն, 23.03.2016թ. ի լրումն 21.03.2016թ. բողոքի ներկայացված գրությամբ, հայտնել է, որ սույն թվականի մարտի 22-ին, չնայած ներկայացված բողոքի, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ընդունել է որոշում պայմանագիր կնքելու մասին և հրապարակել գնահատման արդյունքները, որի մասին պաշտոնապես ծանուցել է www.armeps.am համակարգի միջոցով 22 մարտի 2016թ. ժամը 17:26:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Ընկերություն խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2016թ. պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը, քանի որ պայմանագիր կնքելու դեպքում բողոքը կդառնա առարկայազուրկ և դրանով «Վենկոն» ՍՊԸ-ին կհասցվեն վնասներ և դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2016թ. պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 25.03.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-27/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Վենկոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հայտնեցին, որ բողոքի 2.2 կետով ներկայացված պարբերությունը, որը վերաբերվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածների խախտումներին, տեխնիկական վրիպակ է և խնդրեցին այն չքննարկել, միաժամանակ պնդեցին բողոքի մնացած մասով ներկայացված դիրքորոշումը և հայտնեցին, որ Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը կազմում է՝ 63,158,500 ՀՀ դրամ և այն պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, ինչը հաստատվում է իրենց կողմից ներկայացված հաշվետվություններով: Ընկերության ներկայացուցիչները հայտնեցին նաև, որ դիմել են ՀՀ ֆինանսների նախարարությանը նշված հարցի ճշտման համար և սպասում են պատասխանի:

«Վենկոն» ՍՊԸ-ն, 08.04.2016թ. ի լրումն 21.03.2016թ. բողոքի ներկայացված գրությամբ, հայտնել է, որ բողոքում տեղ է գտել տեխնիկական վրիպակ, մասնավորապես սխալ է նշվել Գնահատող հանձնաժողովի որոշման ամսաթիվը, որը պետք է լինի ոչ թե 19.03.2016թ., այլ՝ 18.03.2016թ.:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ներկայացված բողոքի վերաբերյալ գրավոր կարծիք չի հայտնել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 25.03.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-27/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները պարզաբանեցին, որ Ընկերության հայտը մերժել են, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացությունը բացասական է եղել: Միաժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչները նշեցին, որ եթե պարզվի, որ անճշտություն է եղել և Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, ապա իրենք պատրաստ են կնքելու պայմանագիր:

3. ԳԲԽ-27/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-27/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վենկոն» ՍՊԸ-ն:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով

կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 2.3 կետի համաձայն՝

«Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական փորձառություն,
- 2) տեխնիկական միջոցներ,
- 3) ֆինանսական միջոցներ,
- 4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում Մասնակցի՝

(...)

«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (**Հավելված 3.3**) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

(...)

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:» (...):

3. «Վենկոն» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 26.02.2016թ. ներկայացրած հայտի թիվ 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

4. «Վենկոն» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 26.02.2016թ. ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածով 24-րդ և 51-րդ չափաբաժիններով ներկայացրել է համապատասխանաբար՝ 14.400.000 (տասնչորս միլիոն չորս հարյուր հազար) և 3.600.000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ գնային առաջարկ:

5. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 11.03.2016թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել եզրակացություն «Վենկոն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

6. ՀՀ ֆինանսների նախարարության ՏՏԵՆԶ վարչության 16.03.2016թ. եզրակացության համաձայն՝ «Վենկոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելուն **նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումար չունի:**

7. «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Գնահատող հանձնաժողով) կողմից 18.03.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը՝ հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս լինելու հիմնավորմամբ:

8. Ընկերությունը 21.03.2016թ. թիվ 03/002 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով Պատվիրատուին կրկին տրամադրել Կարգի 67-րդ կետով նախատեսված եզրակացությունը:

9. ՀՀ ֆինանսների նախարարությունը 23.03.2016թ. թիվ 1/73-1/10510-16 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ, նկատի ունենալով, որ ՀՀ Նախագահի 01.03.2016թ. թիվ ՆՀ-213-Ն հրամանագրով ՀՀ ֆինանսների նախարարությունը վերակազմակերպվել է, որից առանձնացվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, առաջարկում են հիշյալ գրություններով ներկայացված տեղեկատվությունը ստանալու համար դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

10. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, (այսուհետև նաև՝ Կենտրոն) ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 30.03.2016թ. թիվ 01/04.1/1237-16 գրությամբ, «Վենկոն» ՍՊԸ-ի 21.03.2016թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ԳԲԽ27/16 բողոքը քննող հանձնաժողովին եզրակացություն տալու համար խնդրել է հայտնել «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն (2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը:

11. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 07.04.2016թ. թիվ 1/6-1/11341-16 գրության համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 01.04.2016թ. դրությամբ «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն (2016թ.) **նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 63.203.423 ՀՀ դրամ:**

4. ԳԲԽ-27/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Վենկոն» ՍՊԸ-ի 21.03.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ • ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 07.04.2016թ. թիվ 1/6-1/11341-16 գրությունը, գտնում է, որ «Վենկոն» ՍՊԸ-ի 21.03.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում

առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նույն Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝

«Մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

(...)

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 18.03.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը՝ հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս լինելու հիմնավորմամբ:

Ընկերությունը 21.03.2016թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Վենկոն» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների, մասնավորապես 2015թ. համախառն եկամտի հանրագումարը կազմել է 63,158,500 առանց ԱԱՀ, ինչը հաստատվում է կցված հաշվետվություններով:

Կենտրոնի կողմից 30.03.2016թ. թիվ 01/04.1/1237-16 հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 07.04.2016թ. թիվ 1/6-1/11341-16 գրությամբ հայտնել է, որ 01.04.2016թ. դրությամբ «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն (2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է **63.203.423 ՀՀ դրամ:**

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 07.04.2016թ. թիվ 1/6-1/11341-16 գրության համաձայն, Ընկերության նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է **63.203.423 ՀՀ դրամ**, որը պակաս չէ Ընկերության ներկայացրած գնային առաջարկից (24-րդ չափաբաժնով՝ 14.400.000 ՀՀ դրամ, 51-րդ չափաբաժնով՝ 3.600.000 ՀՀ դրամ): Այսինքն, Ընկերության «Ֆինանսական միջոցներ» չափանիշը նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի մասով բավարարում է հրավերի պահանջներին, հետևաբար Ընկերության հայտը այս հիմքով ենթակա չէ մերժման: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ բողոքը այս մասով ենթակա է բավարարման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնահատող հանձնաժողովի 18.03.2016թ. «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը ենթակա է դադարեցման՝ գտնում ենք, որ «Վենկոն» ՍՊԸ-ի 21.03.2016թ. բողոքով ներկայացրած Գնահատող հանձնաժողովի 22.03.2016թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու պահանջը նույնպես ենթակա է բավարարման, սակայն մասնակի՝ Գնահատող հանձնաժողովի 22.03.2016թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը ենթակա է դադարեցման միայն 24-րդ և 51-րդ չափաբաժինների մասով, քանի որ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն նշված չափաբաժիններով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Վենկոն» ՍՊԸ-ի 21.03.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

- դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2016թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետով «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.
- դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին 22.03.2016թ. որոշումը՝ 24-րդ և 51-րդ չափաբաժինների մասով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-27/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Դավթյան